# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 1

## «ՊԳԿՎ-2017-ԾՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով ՇՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

06.04.2017թ.
ժամը՝ 11:00

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Վարչության աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Հ.Լպուտյան:

**Հանձնաժողովի անդամներ՝**

Վարչության աշխատակազմի պետական գույքի օտարման բաժնի պետ՝ Ա.Գասպարյան,

Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ.Գևորգյան,

Վարչության աշխատակազմի արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի պետ՝ Ն.Մելքոնյան,

Վարչության աշխատակազմի պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի գլխավոր մասնագետ՝ Մ.Եղիազարյան:

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջատար մասնագետ՝ Մ.Թադևոսյան:

Նիստի ընթացքում «ՊԳԿՎ-2017-ԾՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին պատասխանատու ստորաբաժանման հայտը:

**Հանձնաժողովի անդամների կողմից որոշվեց.**

1. Հաստատել «ՊԳԿՎ-2017-ԾՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեքստը (կցվում է):
2. Հաջորդ նիստն անցկացնել www.armeps.am կայքով սահմանված վերջնաժամկետին:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | **Հ.Լպուտյան** | ........................ |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | **Ա.Գասպարյան** | ........................ |
| | **Գ.Գևորգյան** | ........................ |
| | **Ն.Մելքոնյան** | ........................ |
| | **Մ.Եղիազարյան** | ........................ |
| **Քարտուղար՝** | **Մ.Թադևոսյան** | ........................ |

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2**

**ՊԳԿՎ-2017-ՇՀԱՊՁԲ-15/12 ծածկագրով ՇՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

ք. Երևան

19.04.2017թ.
ժամը՝ 10:00

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**
*Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)*
Վարչության աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Հ.Լպուտյան:

**Անդամներ՝**
*Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)*
Վարչության աշխատակազմի արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի պետ՝ Ն.Մելքոնյան, Վարչության աշխատակազմի պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի գլխավոր մասնագետ՝ Մ.Եղիազարյան:

*Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)*
Վարչության աշխատակազմի պետական գույքի օտարման բաժնի պետ՝ Ա.Գասպարյան, Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ.Գևորգյան:

**Հանձնաժողովի քարտուղար՝**
*Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀմ)*
Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջատար մասնագետ՝ Մ.Թադևոսյան:

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ հեռախոս-140000 ՀՀ դրամ, էլեկտրական թեյնիկ-75000 ՀՀ դրամ, ձեռքի փոշեկուլ-42000 ՀՀ դրամ:

**1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**
**«ՊԳԿՎ-2017-ՇՀԱՊՁԲ-15/9»** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային www.armeps.am համակարգի միջոցով բացվել են ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության շենքում ք.Երևան, Տիգրան Մեծի 4 հասցեում, ապրիլի 19-ին ժամը 10:00-ին:

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

| N/N | Մասնակցի անվան ւ ը | Կազմակերպության էլ. հասցեն |
|---|---|---|
| 1 | «Ալֆապրոջեքտ» ՍՊԸ | t.khalatyan@eldorado.am |
| 2 | «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ | meri@ognakan.am |

**3. Տվյալներ՝ ներկայացված հայտերը ԳՊ/ԲԱ-ի կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան բացելու մասին.**

3.1 «Ալֆապրոջեքտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

3.2 «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

**4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին .**

4.1 **«ՊԳԿՎ-2017-ՇՀԱՊՁԲ-15/12»** ծածկագրով ՇՀ ընթացակարգի շրջանակներում «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում /1-ին և 2-րդ չափաբաժինների համար/ առկա են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

«Ալֆապրոջեքտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում /1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար/ առկա են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն՝

1) «Ալֆապրոջեքտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում որպես կազմակերպության տնօրեն նշված է Վ.Հարությունյանը, սակայն բոլոր փաստաթղթերը /ներառյալ գնի առաջարկը/ ստորագրված են այլ անձի՝ Մ.Ծիրունյանի կողմից: Հայտում բացակայում է Մ.Ծիրունյանին կողմից փաստաթղթերը ստորագրելու իրավասություն ունենալու փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթը՝ լիազորագիրը, ինչը հակասում է ՀՀ գնումների մասին ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետին և ՊԳԿՎ-2017-ՇՀԱՊՁԲ-15/12 ծածկագրով ՇՀ գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.2 կետով սահմանված պահանջներին:
2) 2-րդ և 3-րդ չափաբաժինների ներկայացված Գնի առաջարկը (հավելված 4-ը) ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, քանի որ չափաբաժինների համար հաշվարկված ԱԱՀ-ի գումարը չի համապատասխանում «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Բացի այդ armeps համակարգում մասնակցի կողմից բոլոր չափաբաժինների մասով գները լրացված են ընդհանուր գումարով, մինչդեռ ՊԳԿՎ-2017-ՇՀԱՊՁԲ-15/12 ծածկագրով ՇՀ գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 4.2 կետով հստակ սահմանված է, որ «... գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով և Համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման»:

**5. Մասնակիցների առաջարկած գները.**

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Մասնակցի անվանումը | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Ալֆապրոջեքտ» ՍՊԸ | | | «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ | | |
| | | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գինը | Արժեք | ԱԱՀ | Առաջարկված գինը |
| 1 | 2 | 3 | 4 | | | 5 | |
| 1 | հեռախոս | 110000 | 22000 | 132000 | 66667 | 13333 | 80000 |
| 2 | էլեկտրական թեյնիկ | 33000 | 7000 | 40000 | 38333 | 7667 | 46000 |
| 3 | ձեռքի փոշեկուլ | 19500 | 3500 | 23000 | | | |

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետը և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը՝ «Ալֆապրոջեքտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝
   ա/ «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար
   բ/ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին:
3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետը՝ ՊԳԿՎ-2017-ՇՀԱՊՁԲ-15/12 ծածկագրով ՇՀ գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:
4. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը՝
   **ա/** ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ
   **բ/** ծանուցել «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում էլետրոնային եղանակով ներկայացնել հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:
5. Հաստատել ՊԳԿՎ-2017-ՇՀԱՊՁԲ-15/12 ծածկագրով ՇՀ ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին որոշման հայտարարության տեքստը:
6. Հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | **Հ.Լպուտյան** | ........ |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | **Ա.Գասպարյան** | ........ |
| | **Գ.Գևորգյան** | ........ |
| | **Ն.Մելքոնյան** | ........ |
| | **Մ.Եղիազարյան** | ........ |
| **Քարտուղար՝** | **Մ.Թադևոսյան** | ........ |

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3**

**ՊԳԿՎ-2017-ԾՀԱՊՁԲ-15/12 ծածկագրով ԾՀ**

**ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

28.04.2017թ.
ժամը՝10:00

***Մասնակցում էին՝***
***Հանձնաժողովի նախագահ՝***

Վարչության աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Հ.Լպուտյան:

***Հանձնաժողովի անդամներ՝***

Վարչության աշխատակազմի պետական գույքի օտարման բաժնի պետ՝ Ա.Գասպարյան,
Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ.Գևորգյան,
Վարչության աշխատակազմի արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի պետ՝ Ն.Մելքոնյան,
Վարչության աշխատակազմի պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի գլխավոր մասնագետ՝ Մ.Եղիազարյան:

***Հանձնաժողովի քարտուղար՝***

Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջատար մասնագետ՝ Մ.Թադևոսյան:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացությամբ տրված տեղեկատվությունը, որոնց համաձայն Ընկերության առաջարկած ապրանքը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին և Ընկերությունը պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունները որակվեցին իրականությանը համապատասխանող: Գնահատման արդյունքները արտացոլվեցին գնահատման թերթիկներում:

**Հանձնաժողովը որոշեց՝**

**1)** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասը և ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 50-րդ կետը՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին:

**2)** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

**3)** Հաստատել ԾՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

**4)** 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ին:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | **Հ.Լպուտյան** | ........................ |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | **Ա.Գասպարյան** | ........................ |
| | **Գ.Գևորգյան** | ........................ |
| | **Ն.Մելքոնյան** | ........................ |
| | **Մ.Եղիազարյան** | ........................ |
| **Քարտուղար՝** | **Մ.Թադևոսյան** | ........................ |